ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանին, որն, ինչպես տեղեկացրել ենք, ապրիլի 5-ին վարչապետի ներկայությամբ կարդալու է իր հրաժարականի դիմումը, թերեւս չհաջողվի պատվով լրել շուրջ 12 տարի զբաղեցրած ԳԱԱ նախագահի պոստը:

Երեկ ակադեմիկոս, ԳԱԱ Ֆունդամենտալ գրադարանի տնօրեն Հանրի Ներսիսյանը, որն արդեն մեկ տարի է, բարձրաձայն աղաղակում է Ֆադեյ Սարգսյանի թույլ տված ֆինանսական չարաշահումների մասին, լրագրողներին հիմնավոր փաստերով ներկայացրեց իր բոլոր մեղադրանքները: Մեղադրական բազմաթիվ փաստաթղթերը Հանրի Ներսիսյանը մի կերպ տեղավորել էր ուղիղ 7 թղթապանակների մեջ: Եւ այսպես, ինչպես տեղեկացրել ենք, մոտ 2 ամիս առաջ ԳԱԱ նախագահության անդամներից ստեղծվել էր մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր ակադեմիայի նախագահին Հանրի Ներսիսյանի կողմից ներկայացված ծանր մեղադրանքները: 2 շաբաթ առաջ այս հանձնաժողովն ավարտել է աշխատանքները: Եւ այսպես. մեղադրանք 1-ին. Ռուսաստանի հայերի միության կողմից ակադեմիային նվիրաբերվել է 210 հազար դոլար: Երբ ակադեմիկոս Ներսիսյանն այդ գումարները ծախսելու մասին փաստաթուղթ է խնդրել ԳԱԱ ղեկավարությունից, պատասխանը, ըստ պարոն Ներսիսյանի, եղել է հետեւյալը. «Չենք տալիս եւ վերջ»: Մեղադրանք 2-րդ. գոյություն ունի ԳԱԱ նախագահի Ֆոնդ, որը կազմում է 17,5 մլն դրամ: Թե ուր են գնում այս գումարները, ոչ ոք չգիտի: ԳԱԱ եւ ոչ մի հաշվետվության մեջ այս մասին որեւէ տեղեկություն չկա: Մեղադրանք 3-րդ. ակադեմիան վաճառել է իր ենթակայության բազմաթիվ շենքեր: Օրինակ, ակադեմիայի Ծաղկաձորի հողամասը վաճառվել է հոլանդական աճուրդով. այն գնահատվել է, հետո աճուրդի չի հանվել եւ մինիմալ գներով վաճառվել է մի անձնավորության, որը հետագայում տասնապատիկ ավելի թանկ այն վերավաճառել է: Այս մասին Հանրի Ներսիսյանին այդպես էլ որեւէ փաստաթուղթ չի տրամադրվել: Մեղադրանք 4-րդ. ԳԱԱ նախագահությունը պորտաբույծ կառույց է եւ տարեկան 4-5 մլն դրամ է դնում գրպանը միայն ԳԱԱ տարածքների վարձակալությունից: Հանրի Ներսիսյանին չեն տրամադրել այն տվյալները, թե որքան գումար է ԳԱԱ-ն ստանում վարձակալության դիմաց իր շենքերում տեղակայված Բրիտանական խորհրդից, ինտերնետ ակումբից եւ զանազան այլ կազմակերպություններից: Ըստ Հանրի Ներսիսյանի, Ֆադեյ Սարգսյանը կողոպտում է նաեւ իր ղեկավարած Ֆունդամենտալ գրադարանը՝ վարձով տալով դրա տարածքները, որի իրավունքը նա չունի, քանի որ գրադարանը ՊՈԱԿ է: Մեղադրանք 5-րդ. Ֆադեյ Սարգսյանը զբաղվում է իր աղջկա լոբինգով՝ նրա համար ստեղծելով աշխատանքային հատուկ պայմաններ: Այսպես, Ֆադեյ Տաճատիչն իր դստեր ղեկավարած Բժշկական գենետիկայի կենտրոնին հատկացնում է տասնյակ անգամներ շատ գումար, քան մյուս ինստիտուտներին: Եւ դա այն դեպքում, երբ սույն կենտրոնն ունի ընդամենը 16 աշխատող, որոնցից միայն 3-ն են գիտական աշխատողներ: Այնինչ, օրինակ, Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտն ունի 285 աշխատակից: Այստեղ միայն գիտության դոկտորների մասով ինստիտուտի բյուջեն կազմում է 5,4 մլն դրամ: Երկրաբանական գիտությունների ինստիտուտում կա 181 աշխատող, իսկ բյուջեն այդ մասով կազմում է 5,9 մլն դրամ: Միեւնույն ժամանակ Բժշկական գենետիկայի ինստիտուտի բյուջեն 38.5 մլն դրամ է: Հաջորդ մեղադրանքը. այն, որ ակադեմիան պետբյուջեից ստանում է հսկայական գումարներ միայն շինարարության համար, մենք արդեն տեղեկացրել ենք: Հիշեցնենք, որ բոլոր շինաշխատանքներն առանց տենդերի այստեղ իրականացնում է միեւնույն կազմակերպությունը՝ «Ակունքշինը», բավական բարձր գներով եւ անորակ: Այս մասին ԳԱԱ հաշվետու զեկույցներում որեւէ բան չի նշվում: «Այսինքն, գործում է մի նեղուց, որով փողեր են լվացվում»,- երեկ ասում էր Հանրի Ներսիսյանը: Բացի այս, Ֆադեյ Սարգսյանը ակադեմիայի ներսում իր մարդկանցից ստեղծել է բյուրո, որն առանց նախագահության կայացնում է որոշումներ եւ իրականացնում դրանք: Հիմնականում այդ որոշումների մասին ԳԱԱ բարձրագույն մարմինը՝ նախագահությունը, տեղյակ չի լինում, իսկ բյուրո հասկացություն ԳԱԱ կանոնադրության մեջ գոյություն չունի: Նաեւ ԳԱԱ նախագահության բյուջեն կազմում է տարեկան 130 մլն դրամ այն դեպքում, երբ, օրինակ, Հնագիտության ինստիտուտի բյուջեն 45 մլն դրամ է, Մեխանիկայի ինստիտուտինը՝ 40 մլն եւ այլն: Այսինքն, այն ինստիտուտները, որոնք զբաղված են գիտական գործունեությամբ, ստանում են մի քանի անգամ քիչ գումար, քան ԳԱԱ նախագահությունը, որը

բացարձակապես ոչնչով զբաղված չէ: Հանրի Ներսիսյանի կողմից Ֆադեյ Սարգսյանին ներկայացված մնացած մեղադրանքները, որոնց մենք ժամանակին մանրամասն անդրադարձել ենք, պակաս ծանր չեն:

Հանձնաժողովի աշխատանքի ընթացքում ակադեմիայի նախագահությունը փորձել է Հանրի Ներսիսյանի վրա կոմպրոմատներ հավաքել, սակայն այդպես էլ որեւէ արդյունքի չի հասել: «Ակադեմիայի ղեկավարությունը ոչ միայն ապրում է 20-րդ դարում, այլեւս այստեղ կառավարման մեթոդները զուտ սովետական են: Ես հանձնաժողովում կանգնած էի մի պատի առաջ: Ոչ մի բան չէր ընդունվում: Ոչ մի տրամաբանություն: Օբյեկտիվության մասին խոսք լինել չի կարող: Դա, խոստովանում եմ, ինձ համար դժոխք էր: Ես պահանջելու եմ, որ Մեծ ժողովն անդրադառնա այս ամենին, որ ոչ թե նրան նստեցնեն. թող գնա, իր թոռների, ծոռների հետ խաղա, այլ պետք է այս ամենին գնահատական տրվի: Այս գործունեության պատճառով ակադեմիան այսօր կիսամեռ վիճակում է»,- երեկ ասում էր ակադեմիկոս Ներսիսյանը: Իսկ Մեծ ժողովը տեղի է ունենալու ապրիլի 12-ին: Այդ օրը ԳԱԱ-ն իր համար կընտրի նոր նախագահ:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ